Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1006-28.10.2010,07.02.2011-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 11. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

«Ներկայացուցչի լիազորությունները պետք է հաստատված լինեն նոտարի կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից վավերացված լիազորագրով: Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձեւով եւ վավերացման ենթակա չէ:

Իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է օրենքով նախատեսված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «Ներկայացվողի անունից տրված լիազորագրում պետք է հատուկ նախատեսված լինեն ներկայացուցչի հետեւյալ լիազորությունները» բառերը փոխարինել «Ներկայացուցիչը կարող է իրականացնել հետեւյալ լիազորությունները, եթե դրանց մասին հատուկ նշում կա լիազորագրում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 4-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Պարտապանի անձնագրային տվյալները, ինչպես նաեւ պարտապան- իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը եւ պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը կարող են չնշվել, եթե գործի քննության ընթացքում դատարանը չի կարողացել ստանալ այդ տվյալները:»:

2. 1-ին մասի 7-րդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Այն դեպքերում, երբ արդարադատության արդյունավետության, այլոց իրավունքների պաշտպանության կամ դատական ակտի կատարման շահերից ելնելով հիմնավորված է կատարողական գործողությունների կատարումը ոչ աշխատանքային օրերին, ինչպես նաև գիշերային ժամերին, դատարանը այդ մասին նշում է կատարում կատարողական թերթում:»:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը «կատարողական թերթը» բառերից հետո լրացնել «առաջին անգամ» բառերով:

2. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս.

«Սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով պահանջատիրոջը վերադարձված կատարողական թերթը չի կարող կրկին կատարման ներկայացվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո:»:

Հոդված 5. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «պաշտոնը եւ անունը» բառերը փոխարինել «պաշտոնը, անունը եւ ազգանունը» բառերով:

Հոդված 6. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում՝ պահանջատիրոջից կամ նրա ներկայացուցչից, իսկ օտարերկրյա դատարանի դատական ակտը ՀՀ տարածքում ճանաչելու եւ կատարելու վերաբերյալ միջնորդությունը ՀՀ իրավասու դատարանի կողմից բավարարվելու դեպքում՝ տվյալ դատարանից, կատարողական թերթ ստանալու օրվանից եռօրյա ժամկետում:»:

Հոդված 7. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը «որոշումը» բառից հետո լրացնել «կամ կատարողական թերթը ներկայացնելիս չեն պահպանվել սույն օրենքի 11-րդ, 12-րդ կամ 20-րդ հոդվածներով նախատեսված պահանջները» բառերով:

Հոդված 8. Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.
«4) դա նախատեսված է կատարողական թերթով:»:

Հոդված 9. Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Բարդ եւ ծավալուն կատարողական գործողություններ պահանջող վարույթների ընթացքը արդյունավետ լուծելու համար Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողի կամ հարկադիր կատարման ծառայության մարզային (Երեւանի քաղաքային) բաժնի պետի որոշմամբ կարող է ստեղծվել հարկադիր կատարողների խումբ: Հարկադիր կատարողների խմբի ղեկավարին նշանակում է հարկադիր կատարողների խումբ ստեղծելու մասին որոշում կայացրած պաշտոնատար անձը:»:

Հոդված 10. Օրենքի 37-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով.

«2. Եթե բռնագանձում է տարածվել մեկից ավելի գույքի նկատմամբ, ապա գույքն արգելանքից հանելու մասին դատարան հայց ներկայացվելու դեպքում կատարողական վարույթը կասեցվում է այդ գույքի վրա բռնագանձում տարածելու մասով:»:

Հոդված 11. Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը «բանկերին» բառից հետո լրացնել «եւ դեպոզիտարիա» բառերով:

Հոդված 12. Օրենքի 41-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում՝

1) 2-րդ կետից հանել «կամ նրա գույքի» բառերը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-րդ եւ 4.1-րդ կետերով.

«2.1) անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի եւ (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն.

4.1) պահանջատիրոջը գրավոր առաջարկություն է արվել ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող անշարժ գույքից պարտապանի բաժնեմասը առանձնացնելու պահանջ ներկայացնել դատարան.».

3) 7-րդ կետը «անբավարարության պատճառով» բառերից հետո լրացնել «կամ պարբերական վճարումների վերաբերյալ վճռի կատարման դեպքում» բառերով.

2. 3-րդ մասում՝

1) «5-րդ կետով սահմանված դեպքի» բառերը փոխարինել «2-րդ եւ 5-րդ կետերով սահմանված դեպքերի» բառերով.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նախատեսված արգելքի վերացման դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին:»:

Հոդված 13. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) պահանջատերը հրաժարվել է կատարողական թերթի պահանջների կատարումից.»,

2. 8-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8) պարտապանը դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.»,

3. 9-րդ կետը «պարտապան-իրավաբանական անձը» բառերից հետո լրացնել «կամ պահանջատեր-իրավաբանական անձը» բառերով,

Հոդված 14. Օրենքի 67-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ մասով.

«8. Կատարողական գործողությունների կատարման ծախսեր չեն գանձվում, եթե կատարողական վարույթը կարճվել է կատարողական թերթի պահանջները «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

դրույթներին համապատասխան՝ դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակներ տրամադրելու միջոցով կատարված լինելու հիմքով:»:

Հոդված 15. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: